ԴԱՎԻԹ ԳԱՍՊԱՐՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑԻ ՎԵՐՋԻՆ ՏԱՐԻՆ

Տպագրության եմ ներկայացնում իմ «Չարենցի կյանքը եւ ժամանակը» անտիպ աշխատության (բնույթով ժամանակագրություն) վերջին էջերը, ուր հայոց տարաբախտ հանճարն է՝ դեպի մահ տանող բռնանշումների որոգայթում:

24 հուլիս — *Չարենցը մեկնում է Ծաղկաձոր՝ զբաղվելու կացարանից վտարված ընտանիքի հարցով: Վրդովված խոսում է Ծաղկաձորի գրողների տնից ընտանիքին վտարելու մասին: Վարձում է կառք, կնոջն ու երեխաներին տեղավորում, գտնում դուդուկ նվագողներ, որոնք տխուր մեղեդիներով ուղեկցում են բանաստեղծի երթը: Հայոց բանաստեղծը հետաքրքրասեր ժողովրդի աչքի առաջ անցնում էր իր Գողգոթայի ճանապարհը: Այդպես դուրս են գալիս Ծաղկաձորից, որից հետո մեքենա են նստում ու հասնում Երեւան:*

Ճանապարհին Չարենցը զայրալից խոսքեր է նետում իր ընտանիքն այդ վիճակին հասցնողների հասցեին: Նրա արարքը գնահատվում է որպես խուլիգանություն եւ վիրավորանք՝ հասցված ՀԿ(բ)Կ-ի, Համկ(բ)Կ-ի եւ ամբողջ ԽՍՀՄ-ի ղեկավարությանը, քանի որ ազգությամբ ադրբեջանցի պաշտոնյան, որին հատկացնում են Չարենցի ընտանիքին տրված սենյակը, ՀԿ(բ)Կ Կենտկոմի անդամ էր (Խոսքը Ալի Մամեդով Սաֆար Հուսեինզադեի մասին է: Վերջինս եղել է Կենտկոմի անդամ: Հնարավոր է, որ խոսքը Սաֆար Ալմամեդովի մասին է, որը եղել է Կենտկոմի օրգան՝ 1937—1939 թթ. Երեւանում լույս տեսնող ադրբեջաներեն «Կոմունիստ» թերթի խմբագիրը)[1]:

[1] *Տե՛ս «Չարենցի հետ: Հուշեր», 2008, Երեւան, «Նաիրի», էջ 330, 375:*

25 հուլիս — *Երեւանում սաստիկ շոգերի պատճառով Զարենցն ընտանիքը տեղափոխում է Նորք, վարձում է երկհարկանի մի մեծ տան վերին հարկը։*

26 հուլիս — *ՀԽՍՀ ՆԳԺԿ-ի մարմինների կողմից Զարենցի կապակցությամբ որոշում է կայացվում. ըստ ՀԽՍՀ-ի ՔՕ 67, 68 հոդվածներով առաջադրվող մեղադրանքների՝ «Նախկինում ընտրված խափանման միջոցը՝ չբացակայելու մասին ստորագրություն վերցնելը, փոխել բանտարկության՝ կալանավորելով ՀԽՍՀ ՆԳԺԿ-ի ներքին բանտում»։*

Ատելության ու թշնամանքի այս վանդակաճաղից բանաստեղծն այլեւս դուրս չէր գալու։

Կոմիսար Մուղդուսու ստորագրությամբ լրացվում է 6/29 օրդերը՝ Զարենցին ձերբակալելու եւ բնակարանը խուզարկելու մասին։

27 հուլիս — *ՀԽՍՀ ՆԳԺԿ-ի 4-րդ բաժնի կողմից Զարենցը կալանավորվում է։ Նրան մեղադրանք է ներկայացվում՝ ըստ ՀԽՍՀ-ի ՔՕ 67, 68, 78 հոդվածների, նշվում է նաեւ, որ Զարենցը շարունակում է «ակտիվ պայքար մղել ընդդեմ խորհրդային իշխանության»։*

Կալանավորում են Նորքում, ուր առանձնացել էր ընտանիքի հետ։ Նրա ընտանիքը եւս՝ իր հետ մեկտեղ, Նորքից տեղափոխվում է իրենց բնակարան։ ՆԳԺԿ-ի նշված աշխատակիցները խուզարկում են Զարենցի աշխատասենյակը, խնդրում իրենց նվիրել գրքեր. մակագրությամբ նվիրում է։ Դուրս գալուց առաջ ցանկանում է երեխաներին համբուրել, հրաժեշտ տալ, կինն ասում է՝ պետք չէ հրաժեշտ տալ, մի՞թե չես վերադառնալու, կվերադառնաս, նոր կհամբուրես։ Կնոջն է տալիս ձեռքի ոսկե ժամացույցը՝ կարող է քեզ պետք գալ, քանի որ հսկիչների ներկայությամբ շատ բան ասել չէր կարող, երկար, մի քանի րոպե ակնդետ նայում է կնոջ աչքերին եւ հսկիչների ուղեկցությամբ դուրս գալիս։ Պատշգամբից տեսնելով, թե ինչպես են Զարենցին նստեցնում մեքենա ու տանում՝ կինը նոր է հասկանում, որ նա գնում է անվերադարձ։ Կալանավորվում է ՆԳԺԿ-ի ներքին բանտում։ Աշխատակցի ձեռքով լրացվում է «Ձերբակալվածի անկետա»՝ հաստատված է Զարենցի ստորագրությամբ։ Այս օրերի, ժամերի ու պահերի մասին պահպանվել է կնոջ՝ Իզաբելայի հուշը[2]*։*

[2] *Տե՛ս նույն տեղում, էջ 376—377։*

Հարցը քննվում է ՀԳՄ-ի վարչության նիստում. Չարենցը հեռացվում է Գրողների միությունից «քաղաքական խուլիգանության» համար: Մյուս օրը Գեւորգ Աբով, Հովիկ Մելիքյան, Հմայակ Սիրաս, Նորայր Դաբաղյան կազմով «պատվիրակություն» է գնում Կենտկոմի քարտուղար Ամատունու մոտ եւ պահանջում, որ ձերբակալվի «քաղաքական խուլիգանը»: «Ամատունին սկզբում զգուշանում է՝ ասելով.— Եղիշե Չարենցն է, ժողովրդի սիրելին, ապստամբություն կարող է լինի: Ու չի համաձայնում: Նրանք գնում են նաեւ մյուս օրը: Ամատունին կարգադրում է ձերբակալել հիվանդ, անկողնում պառկած պոետին: Եւ սեւ մեքենան գիշերով անկողնուց հանում եւ բանտ է տանում պոետին՝ տանելով նրա ու Վահան Տերյանի արխիվը»[3]:

Այլ վկայություն՝ Հայկ Ֆադեյի Դոնոյան. «Պետհրատի գործով Կենտկոմի քարտուղար Ամատունու մոտ էի: Կատաղած ներս մտավ Հովիկ Մելիքյանը եւ ասաց. «Մինչեւ երբ պետք է հանդուրժենք այդ խուլիգանին: Ինչո՞ւ չեք կարգադրում դրան կալանավորել»: Ամատունին թողեց ինձ, մի պահ մտածեց, ապա զանգահարեց Մուղդուսուն եւ կարգադրեց Չարենցին կալանավորել: Միաժամանակ Ամատունին ասաց՝ «թող պատմությունը ինձ դատապարտի»»[4]:

28 հուլիս — *ՆԳԺԿ-ի ՊԱՎ-ի 4-րդ վարչության պետը կազմում է «Հարցաքննության արձանագրություն»: Հարցաքննությունն ընթացել է մեկ հարցի շուրջ:*

«Հարց. *Հետաքննությանը հայտնի է, որ վերջերս լինելով Դարաչիչակում [Ծաղկաձոր], հակահեղափոխական հարձակում եք թույլ տվել խորհրդային իշխանության հասցեին, ցուցմունք տվեք ըստ էության:*

Պատասխան. *Ս. թ. հուլիս ամսվա կեսերին ինձ հաղորդեցին, որ ես կարող եմ ընտանիքս տանել Դարաչիչակ, որտեղ ինձ հատկացրեցին փոքր սենյակ: 17/VII-ին գնալով Դարաչիչակ՝ ինձ տարան հողե հատակով փոքրիկ մի սենյակ, ես չհամաձայնեցի, 2 օրով ինձ հատկացրին գրողների հանգստյան տան գրասենյակը, այնուհետեւ ցույց տվին մասնավորից վերցրած մի սենյակ, որից հետո ես մեկնեցի Երեւան:*

---

[3] Հ. Մկրտչյան, *Ակսել Բակունց, Եղիշե Չարենց եւ ուրիշներ, «Գրական թերթ», 1989, թիվ 12, 17 մարտ:*

[4] Վ. Առաքելյան, *Ճակատագրի խաչմերուկներում, Երեւան, ԵՊՀ-ի հրատ., 2003, էջ 81:*

*24.*VII-*ին իմանալով, որ վարչական կարգով ընտանիքս դուրս են արել սենյակից, գնացի Դարաչիչակ։ Հասնելով իմացա, որ 20.*VII-*ին նրանց սենյակից դուրս են արել շրջանային դատախազի համագործակցությամբ, երեք օր նրանք ապրել են ճաշարանում, իսկ 24.*VII-*ի վաղ առավոտյան, մինչեւ իմ գալը, մի սենյակից հանել են 8 երիտասարդ գրողի, եւ իմ ընտանիքը տեղավորել այդ սենյակում։ Անհանգստացած այդ դեպքից՝ ես խոսակցություն ունեցա Դարաչիչակի գրողների տան բաժնի վարիչ Աշոտի, Աբովի, Սողոմոն Տարոնցու եւ այլոց հետ, որոնց ներկայությամբ հայտարարել եմ, որ Ալիմամեդովը, լինելով Կենտկոմի անդամ, դատախազության միջոցով օգտվել է իր ծառայողական վիճակից եւ հասել այն բանին, որ գրողի բացակայության ժամանակ սենյակից դուրս է արել նրա ընտանիքը, ինչը ես համարում եմ հակահեղափոխական գործողություն, որից կարող է օգտվել հակահեղափոխությունը եւ, օգտագործելով ազգային մոմենտը, տարածել պրովոկացիոն լուրեր։*

Այդ խոսակցության մասնակիցներից մեկը ինձ մեղադրեց ՀԿ(բ)Կ Կենտկոմի դեմ հակահեղափոխական հարձակման մեջ, բայց ես բացատրեցի, որ իմ մեղադրանքն ուղղված է ոչ թե Կենտկոմի դեմ, այլ նրա անդամներից մեկի, այսինքն՝ Ալիմամեդովի դեմ, որի գործողությունների համար Կենտկոմը չի կարող պատասխանատու լինել։

Հարց. *Դուք սխալ եք խոսում, հետաքննության տվյալներն ասում են, որ Դուք ուղղակի հակահեղափոխական հարձակում եք գործել խորհրդային իշխանության դեմ։ Տվեք ճշմարիտ ցուցմունք։*

Պատասխան. *Ես միանգամայն բորբոքված վիճակում էի, ես խոսել եմ Ալիմամեդովի դեմ, ինչի մասին ասացի վերեւում։ Իհարկե, ես չպետք է Ալիմամեդովի հասցեին թույլ տայի այդպիսի խոսքեր, բայց թույլ եմ տվել իմ վիճակի հետեւանքով։ Խնդրում եմ հարցաքննել այն անձանց, ովքեր ներկա էին այդ խոսակցությանը»*[5]*։ Չարենցի դեմ հարուցվում է նաեւ լրացուցիչ մեղադրանք՝ նախատեսված 17–65 հոդվածներով։ Բացի նախնական հարցաքննությունից՝ այլ հարցաքննություն չի եղել։ Բանտում պահանջել է հարցաքննել իրեն՝ պարզելու մեղքը։*

Հուլիսի 28-ին ԳՄ-ի քարտուղարության նիստում վերստին քննում են «Չարենցի խուլիգանության մասին հարցը» եւ կայացնում վերջնական

---

[5] Ե. Չարենց, *Նորահայտ էջեր, կազմ. Դ. Գասպարյանը, Երեւան, ԵՊՀ-ի հրատ., 1996, էջ 372–373։*

որոշում. «Հեռացնել գրողների միությունից Ե. Չարենցին՝ իր խուլիգանության եւ պրովոկացիոն արարքների համար, որ թույլ է տվել Ծաղկաձորում հուլիսի 24-ին»[6]։

Ըստ Սերիկ Դավթյանի հուշերի՝ ձերբակալությունից առաջ եւս հետապնդել են նրան[7]։

Տառապում էր անքնությամբ, նյարդային վիճակում էր, Գրողների միություն չէր մտնում, նողկանք ուներ, հուսահատությունից մտածել է անգամ ինքնասպանության մասին։ Նրան այցելել է բժիշկ Մելիք-Ադամյանցը, ըստ որի՝ «Չարենցը դատապարտված է, նրա օրգանիզմը քայքայված է, սիրտը ծայրագույն աստիճանի թուլացած է։ Ալկոհոլը, ծխախոտը, թմրադեղերը նրան վերջնականորեն կործանել են։ <...>։ Մենք այստեղ անզոր ենք։ Այսպես նրան մնում է մի երկու տարվա կյանք»[8]։

Հիմնական մեղադրանքը՝ Չարենցն այլ գրողների հետ մտել է Ստեփանյանի գլխավորած հակահեղափոխական-նացիոնալիստական-տրոցկիստական կազմակերպության մեջ, նախկին «Նոյեմբեր»-ի կորիզով ունեցել է իր համախոհները։ «Նոյեմբեր»-ը գրականից վերածվել է քաղաքական խմբակցության, ընդունել հակախորհրդային կողմնորոշում։

«Չարենցի բանտարկությունը Գեւորգ Աբովի եւ նմանների կողմից խնամքով պատրաստված դավադրություն էր»[9]։

Տասնհինգ օր Իզաբելան լուր չի ունեցել Չարենցից։ Տասնհինգ օր անց միայն բանտից զանգահարել են, տեղեկացրել, որ իրենց մոտ է, եւ մորֆի են պահանջել։ Առաջին ամիսներին կնոջը թույլատրել են ոչ միայն սնունդ տանել, այլեւ դեղորայք, հագուստ։ Կինը նրան հասցրել է անհրաժեշտ թմրամիջոցները։ Վերջին ամսում արգելել են։ Տեսակցություն թույլ չեն տվել։

3 օգոստոս — *Այս թվագրությամբ են պահպանվել «Մայրամուտային I», «Մայրամուտային II», «Մայրամուտի երգ» բանաստեղծությունները։ Նշանակում է՝ գրել է բանտում եւ կարողացել դուրս ուղարկել։*

1937 — *Բանտից շապիկի վրա կնոջը ռուսերեն գրում է. «Իզաբելա՛, լավ նայիր երեխաներին, փրկիր ձեռագրերս։ Այդ հարցով դիմիր միմիայն Ռեգինային եւ վստահիր նրան, նա քեզ կօգնի»։*

---

[6] *Գրականության եւ արվեստի թանգարան, Գրողների միության ֆոնդ, 15։*
[7] *Տե՛ս «Չարենցի հետ։ Հուշեր», 2008, էջ 189։*
[8] *Նույն տեղում, էջ 325։*
[9] *Վ. ԱՌԱՔԵԼՅԱՆ, Ճակատագրի խաչմերուկներում, էջ 25։*

Ռեգինան այցելում է Չարենցի տուն. «Իզաբելան դատարկեց միջին չափի մի ճամպրուկ եւ, բացելով Չարենցի գրասեղանի դռները, կարծես տենդի մեջ, հապճեպորեն խցկելով տարբեր դարակներից աջ ու ձախ ձեռքն ընկած ձեռագրերը՝ մոտ քսան թղթապանակ, տեղավորեց այնտեղ: Վերջին երեք հաստափոր թղթապանակները չտեղավորվեցին ճամպրուկում»[10]: Այդ երեք թղթապանակները թաքցրել են, Ռեգինան տեղափոխել է ավելի ուշ: Նույն գիշեր իր հարազատներից մեկի տան ներքնահարկում (Ադամյան փողոց, 7) փոս է փորում, զմռսում միջին չափի մի տակառ, թղթապանակները փաթաթում մոմլաթի կտորների մեջ, դասավորում տակառում եւ թաղում հողի տակ: Այդ գործում նրան օգնել է ազգականը՝ Եղիշե Ավետիսյանը, որը հետագայում չի վերադարձել պատերազմից:

Խուզարկում են տունը, հատկապես Չարենցի աշխատասենյակը տակնուվրա են անում եւ կնքում: Էմինը, Վիգեն Խեչումյանն ու Իզաբելան հավաքում են գրքերը, թղթերը, ձեռագրերը: Էմին. «Իզաբելայի մոր՝ Աննայի ասելով, ձեռագրերի մի մասը Չարենցն ու նրա կինը պահ էին տվել Անժիկ անունով մի կնոջ եւ նրա ընկերուհուն (հետագայում պարզվեց, որ դա նկարչուհի Ռեգինա Ղազարյանն է եղել)[11]:

Իզաբելան հիշում է շապիկի վրա քիմիական մատիտով արած գրությունը. «Իզաբելա, վստահիր Ռեգինային եւ իմ բոլոր ձեռագրերը հանձնիր նրան: Պահպանիր իմ ձեռագրերը, փրկիր միայն Ռեգինայի միջոցով: Հաջորդ օրը նա [Ռեգինան] ինձ մոտ եկավ երեկոյան ժամը իններին: <...>: Ես, ուրեմն, բոլոր այդ ձեռագրերը, որ գտնվում էին կարմիր պահարանում, հավաքեցի. դրանք նրա մաքրագրություններն էին: Ես գիտեի, որ դրանք մաքրագրություններ էին, որովհետեւ նա, երբ մաքրագրում էր, պահում էր սեկրետերում: Իսկ սեւագրությունները նրա սեղանին էին, ուր դրված էին նաեւ նամակներ <...>: Ինչքան մաքրագիր կար, բոլորը տվեցի. անտիպները, բոլորը մաքուր՝ տպագրության համար: Դրանք, որ ես գիտեի մաքրագիր են, այդ բոլորը հավաքեցի, դրեցի ճամպրուկի մեջ եւ «Գիրք ճանապարհի»-ի մի օրինակը, որ նա նվիրել էր աղջկաս: Ասում եմ «Նրա բոլոր գրքերը վառում են, գուցե էս մի գիրքը մնա քեզ մոտ: <...>: Ես հետո էլ ոչինչ չիմացա այդ ձեռագրերի եւ Ռեգինայի կյանքի մասին»[12]:

---

[10] *«Չարենցի հետ: Հուշեր», 2008, էջ 87:*

[11] *Նույն տեղում, էջ 188–189:*

[12] *«Չարենցի հետ: Հուշեր», 1997, Երեւան, «Նաիրի», էջ 377–378:*

Իզաբելայի հիշողության մեջ կան նաեւ հենակետեր. «Ես բոլորը հավաքեցի, տվեցի Ռեգինային։ Բայց նրա սեւագրությունները... Նրա գրասեղանին, թղթապանակներում շատ բան կար։ Եւ ես անընդհատ մտածում եմ. «Սեւ պահարան էր, կարմիր պահարան էր նրա աշխատասենյակում։ Մինչեւ անգամ այդ գրասեղանը, որ ծածկված էր ինչ-որ բանով, իմ մոր մոտ է, տեսել եմ։ <...>։ Բայց հանելուկ է մնում, թե ինչ եղավ նրա գրասեղանը, որովհետեւ գրասեղանի վեց դարակները լիքն էին»[13]։ Դարակներում, թղթապանակների մեջ խմբավորված, եղել են նամակներ, ձեռագրեր, բացիկներ։

Որպես ՆԳԺԿ-ի աշխատակից՝ աշխատասենյակն ստուգելու պահանջով ներկայացել է Եղիշե Հովհաննիսյանը եւ ցուցակագրել գրադարանը, հետո այն (1600 կտոր գիրք) տեղափոխել է ԳԱԹ։ Հետագայում 160 կտոր գիրք անհայտացել է։ Ըստ նրա՝ «Դա մի ժամանակ էր, որ եթե ես Չարենցի գրադարանի կեսը իմ տուն տանեի, հանցանքը կներվեր»[14]։

Իզաբելային բանտարկելուց հետո նրա իրերը, իր իսկ ցուցումով, տվել են մորը։ Եղիշե Հովհաննիսյանը դիմել է Իզաբելայի մորը՝ Աննային. ««Ձեզ մոտ չկա՞ Չարենցի գրվածքներից, գրքերից»։ Դե՛, մայրս էլ անգրագետ կին է։ Ասել է. «Մի քանի բան կա» եւ վերցրել տվել է նրան։ Նա մորս փող է տվել...»[15]։

8 սեպտեմբեր — *Երեւանի քաղաքային բանտում Դ. Դզնունին վերջին անգամ տեսնում է Չարենցին։ Ըստ նրա՝ Չարենցին պահել են երկրորդ հարկի մի առանձնախցում։ Սովորություն է ունեցել նստելու խցի պատուհանի գոգին։ Կալանավորներին զբոսանքի են դուրս բերում առավոտյան ժամերին. «Բայց Չարենցին, մեզ անհայտ պատճառով, զբոսանքի էին դուրս բերում ժամը 9-ից հետո։ <...>։ Իմ առաջ կանգնած էր մի քիչ նիհարած, բեղ ու մորուք թողած Եղիշեն, որի գլխի մազերը խուզել էին։ Նրա հագին ձմեռային պիժամա էր՝ դեղին գույնի եւ սեւ շերտերով։ Նա շատ հանգիստ եւ հավասարակշռված էր։ <...>։ Իմ հարցին՝ «Ինչպե՞ս ես քեզ զգում»,— նա ժպտալով պատասխանեց. «Է՛հ, ինչպես պիտի զգամ, սա բանտ է... Ծաղկաձորում հայհոյել եմ Ամատունուն — լավ եմ արել, պատրաստ եմ հիմա էլ կրկնել նույնը։ Նա մեր Աղասու գլուխն*

[13] *Նույն տեղում, էջ 380։*
[14] *Նույն տեղում, էջ 392։*
[15] *Նույն տեղում, էջ 377—382։*

ուտողներից է... էհ, ինչ որ է, հալբաթ մի օր այդ արդարությունը ի հայտ կգա...»[16]։

«Նա (Չարենցը — Դ. Գ.) հիվանդ է եղել դիզենտերիայով (արյունալույծ հիվանդություն.— Դ. Գ.), պրիմուսի վրա թեյամանով շարունակ սուրճ է եփել, սանիտարները շարունակ լսել են նրա ձայնը՝ «Քո՛ւյր, քո՛ւյր», քաղաքից հատուկ բժիշկներ են կանչվել, բայց եւ այնպես չեն կարողացել փրկել նրան։ Գիշերով նրա դին բանտից դուրս են տարել»[17]։ Դիզենտերիայով վարակվում են նաեւ թմրադեղին ընտելացածները, որոնց զրկում են օգտագործելու հնարավորությունից։

14 սեպտեմբեր — *Քաղաքական ալիքն ուղղվում է Ամատունու եւ նրա հովանավորած ուժերի դեմ։ Ձերբակալվում է ժողկոմ Խորեն Մուղդուսին (Աստվածատուրով, 1898—1938)։ Լինելով ՀԿ(բ)Կ Կենտկոմի լիագումար նիստի մասնակից, ըստ Ստալին-Բերիա ցուցումի, ձերբակալվել է նախօրյակին՝ հենց նիստերի դահլիճում։ Ըստ պաշտոնական կարծիքի՝ կորցրել էր պետական ծառայողի վստահությունը։ Նրա կարգադրությամբ, 1937-ի օգոստոսին Սահակ Տեր-Գաբրիելյանից ցուցմունք կորզելու նպատակով ծեծի ենթարկելով, սպանել էին եւ հետքերը քողարկելու համար դուրս նետել երրորդ հարկի պատուհանից. իբր ինքն է իրեն նետել։ 1938-ի փետրվարի 8-ին Մուղդուսին հատուկ կարգով գնդակահարվում է Մոսկվայում, Գեւորգովը, Նիկողոսյանը նույնպես՝ Մոսկվայում՝ հատուկ կարգով՝ 1938-ի փետրվարի 3-ին։*

1959-ին Թիֆլիսի ներքին բանտում տեղի է ունեցել 1937 թվականի եւ հետագա տարիների հետաքննիչներ Ռուբեն Հարոյանի եւ Գուրգեն Մուրադյանի դատավարությունը. նրանք հայտարարել են, որ իրենք ոճիր են գործել Կենտկոմի նախկին քարտուղարներ Գ. Հարությունյանի եւ Ս. Թովմասյանի գիտությամբ ու կարգադրությամբ եւ ավելացրել, որ իրենք սոսկ հրահանգներ կատարողներ են։

Մուղդուսուն հաջորդում է բելառուս Վիկտոր Վասիլիի Խվորոստովը (1903—1939), որին հայացնում են, դարձնում Խվորոստյան, եւ որն իր գործունեությունն սկսում է ժականակին տարածված հայտարարությամբ՝ «Ժողովրդի յուրաքանչյուր թշնամու համար մենք պատրաստի ունենք մեկական գնդակ»։

---

[16] *«Չարենցի հետ։ Հուշեր», 2008, էջ 266։*

[17] *Նույն տեղում, էջ 265—267։*

15–23 սեպտեմբեր — *Տեղի է ունենում ՀԿ(բ)Կ ԿԿ-ի սեպտեմբերյան լիագումար նիստը։ Աշխատանքն սկսվել է սեպտեմբերի 15–18-ին եւ եռօրյա ընդմիջումից հետո շարունակվել 22–23-ին։ Մասնակցում են ՀամԿ(բ)Կ Կենտկոմի Քաղբյուրոյի անդամ Ա. Միկոյանը, ՀամԿ(բ)Կ Կենտկոմի ղեկավար կուսակցական մարմինների բաժնի վարիչ Գ. Մալենկովը՝ բաժնի երեք աշխատակիցների հետ, ԽՍՀՄ ՆԳԺԿ-ի ներկայացուցիչ, ՀԿ(բ)Կ Կենտկոմի անդամ Լ. Բերիան։ Նրանց հետ էր ԽՍՀՄ ՆԳԺԿ-ի քննչական խումբը (Ալտման, Գելման եւ ուրիշներ)[18]։ Ընթերցվում է Ստալինի նամակը ՀԿ(բ)Կ Կենտկոմին՝ կուսակցական աշխատանքների մեջ տեղ գտած թերությունների մասին։ Շարժառիթը ՀԽՍՀ-ի ժողկոմխորհի նախկին նախագահ Սահակ Տեր-Գաբրիելյանի մահվան հանգամանքները կոծկելն էր։*

Ստալինի նամակը սեպտեմբերի 15-ի երեկոյան նիստում կարդում է Մալենկովը[19]։

Պաշտոնական տեղեկանք. «Սեպտեմբերի 23-ին իր աշխատանքն ավարտեց Հայաստանի Կ(բ)Կ Կենտկոմի պլենումը։ Պլենումը որոշեց ՀԿ(բ)Կ Կենտկոմի քարտուղարներից հանել՝ Հ. Ամատունուն եւ Ստ. Ակոպովին։ Պլենումը ՀԿ(բ)Կ Կենտկոմի առաջին քարտուղար ընտրեց ընկ. Գ. Ա. Հարությունյանին»[20]։

ՀԿ(բ)Կ Կենտկոմի առաջին քարտուղար Ամատունին սեպտեմբերի 22-ին հենց դահլիճում էլ ձերբակալվում է։ Նրա հետ կապված մաքրագործումները ստալինյան հալածանքների երկրորդ փուլն են եւ տեւում են մինչեւ 1939 թ.։ 1938 թ. հուլիսի 28-ին՝ դատավճռից հետո, դարձյալ Մոսկվայում գնդակահարվում են Ամատունին եւ Գուլոյանը։

20 սեպտեմբեր — *Քաղվածք ՀԽՍՀ Գլավլիտի պետի գաղտնի նամակից. «Ցուցակ հակահեղափոխական հեղինակների գրքերի եւ գրքույկների, որոնք ենթակա են ոչնչացման.*

9. Եղիշե Չարենց — *բոլոր գրքերը»[21]։*

22 սեպտեմբեր — *Հերթական բռնություններին հաջորդում են պատժիչ խստացումները.*

---

[18] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 17, գ. 25, թ. 7–10։*

[19] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 25, գ. 78ա, թ. 1–5։ Նամակն առաջին անգամ հրապարակվել է «Երեկոյան Երեւան» օրաթերթում, 1988, թիվ 213, 9 սեպտեմբերի։*

[20] *«Ինֆորմացիոն հաղորդագրություն», «Խորհրդային Հայաստան», 1937, 26 սեպտեմբերի։*

[21] *Ե. Չարենց, Գիրք մնացորդաց, Երեւան, «Տիգրան Մեծ», էջ 307։*

«Ընկ. Ստալինին

Հայաստանը հակախորհրդային տարրերից մաքրելու նպատակով ընկ. Միկոյանը խնդրում է թույլատրել լրացուցիչ գնդակահարելու 700 դաշնակցականների եւ այլ հակախորհրդային տարրերի։

Առաջարկում եմ գնդակահարել 1500 մարդ[ու], իսկ նախկինում հաստատված թվով, ընդհանուր առմամբ, 2000 մարդ[ու]։

ԽՍՀՄ ներքին գործերի ժողովրդական կոմիսար

Պետական անվտանգության գլխավոր կոմիսար Եժով

22 սեպտեմբերի, 1937 թ.»։

Գրության վրա Ստալինը մակագրել է՝ «Կողմ»։ «Կողմ»-ին միացել են Մոլոտովը, Կագանովիչը, Կալինինը, Ջուբարը[22]*։*

25 սեպտեմբեր — *Իզաբելա Զարենցը, տեսնելով, որ Զարենցին ձերբակալողներն իրենք են ձերբակալվել, եւ կարծելով, թե բանաստեղծի հանդեպ պաշտոնական վերաբերմունքը կարող է փոխվել, դիմում է ԽՍՀՄ-ի ժողկոմխորհի նախագահի տեղակալ Ա. Միկոյանին եւ խնդրում հաշվի առնել ամուսնու առողջական ծանր վիճակն ու անմեղությունը, եւ միջոցներ ձեռնարկել ազատելու բանտից. «Արդեն երկու ամիս է, ինչ իմ ամուսինը բանտարկված է Հայաստանի ներքին գործերի նախկին ժողկոմ Մուղդուսու կողմից, ըստ որի՝ նա բանտարկվել է «որպես խուլիգան»։ Բայց առ այսօր <...> նույնիսկ քննություն չի կատարված, եւ հայտնի չէ, թե ինչու է նա ձերբակալված։ <...>։ Վերջին երկու տարիներին նա գամված էր անկողնուն, բայցեւ ստոր թշնամիները այստեղ էլ նրան հանգիստ չթողեցին՝ շարունակելով նրան ամեն կերպ ստորացնել ու վիրավորել՝ վտարելով նրան պրոլետգրողների միությունից, նրա ընտանիքը երբեմն հասցնելով ամենասուր կարիքի, սովի, չտպագրելով նրա ստեղծագործությունները <...>։ Հաղորդելով այս ամենի մասին՝ խնդրում եմ միջոցներ ձեռնարկել՝ ազատելու իմ հիվանդ եւ անմեղ ամուսնուն, ով տառապում է ստոր թշնամիների բանսարկություններից, եւ վերականգնել նրա դիրքն ու հեղինակությունը հասարակության մեջ»*[23]*։ Զարենցին ոչ միայն չեն ազատում, այլեւ այս նամակն առիթ է դառնում ձերբակալելու Իզաբելային։*

---

[22] *Սոցիալ-քաղաքական պատմության Ռուսաստանի պետական արխիվ, ֆ. 17, ց. 166, գ. 580, թ. 10։*

[23] *Ե. Զարենց, Նորահայտ էջեր, էջ 620–621։*

1937, սեպտեմբեր — *Բանտում գրում է «Միջնադարյան կացին», «Թիֆլիսցի կինտոն» բանաստեղծությունները։*

26 սեպտեմբեր — *Թիֆլիսից Միկոյանն ու Մալենկովը գնացքով Երեւան են ուղեկցում Գրիգոր Հարությունյանին, վագոնի մեջ Միկոյանը նրան հայտնում է, որ առանց Հարությունյանի մասնակցության՝ ՀԿ(բ)Կ Կենտկոմի պլենումը նրան «ընտրել» է ՀԿ(բ)Կ Կենտկոմի առաջին քարտուղար։ Մինչ այդ աշխատել է Թիֆլիսի քաղխորհրդի գործկոմի նախագահ, Թիֆլիսի վերջին հայ քաղաքագլուխն էր։*

27 սեպտեմբեր – 6 հոկտեմբեր — *Չարենցը բանտում նամակ է գրում Ա. Իսահակյանին եւ նրան ձոնում բանաստեղծություն (գրված է մատիտով՝ ճերմակ թաշկինակի վրա)։*

«Այս է, սիրելի Ավետիք։ Ոգով պայծառ եմ եւ առույգ, ընտանիքի հոգսն է միայն ինձ հոգեպես ընկճում եւ հոշոտում։ Այդ էլ թողնում եմ ալլահին եւ հայ ժողովրդին։

1937. 6. X, բանտ Չարենց»[24]*։*

2 հոկտեմբեր — *Չարենցի գործի կապակցությամբ ՆԳԺԿ-ի մարմինները որոշում են ՀԽՍՀ-ի ՔՕ 67, 68, 78 հոդվածներին լրացուցիչ ավելացնել նաեւ 17—65-ը. «Եղիշե Աբգարի Սողոմոնյանը (Չարենց), լինելով գրողների հակահեղափոխական նացիոնալիստական խմբի ղեկավար եւ, կապված լինելով Հայաստանի հակահեղափոխական տրոցկիստական նացիոնալիստական տեռորիստական կենտրոնի ղեկավար Ստեփանյան Ներսիկի հետ, տեղյակ է եղել նրա տեռորիստական մտադրություններին՝ ուղղված ընկերներ Ստալինի ու Բերիայի դեմ, բազմիցս լսել է նրա տեռորիստական արտահայտությունները եւ, չմերկացնելով նրան, այդ մտադրությունները հաղորդել է գրողների հակահեղափոխական նացիոնալիստական խմբի մյուս անդամներին (Վանանդեցի, Նորենց), դրանով իսկ ինքն էլ կանգնելով Ստեփանյանի հայեցակետի վրա, այսինքն՝ տեռորի հայեցակետի վրա՝ ուղղված ընկերներ Ստալինի ու Բերիայի դեմ»։ Ստորագրել են՝ Աբգարով, Ակոբով, Պետրով։ «Սույն մեղադրանքը ինձ հայտնված է 1937 թ. «....հոկտեմբերին»» արտահայտության տակ բացակայում է Չարենցի ստորագրությունը, անհայտ է նաեւ հայտնման օրը»*[25]*։*

---

[24] *Ե. Չարենց, Երկերի ժողովածու, հ. VI, Երեւան, ԳԱ հրատ., 1968, էջ 456—457։*

[25] *Ե. Չարենց, Նորահայտ էջեր, էջ 605։*

ՀԽՍՀ-ի ՔՕ 67-րդ եւ 68-րդ հոդվածները պատիժ են սահմանում հակահեղափոխական, նացիոնալիստական գործունեության համար, 78-րդը՝ Անդրկովկասի ժողովուրդների եղբայրական համագործակցության խափանման նպատակով ազգային թշնամանքի բորբոքման, 17–65-րդը՝ ղեկավարության դեմ ահաբեկության նախապատրաստման: Այս հոդվածներով դատապարտվածներին գնդակահարում էին:

6 հոկտեմբեր — *Բանտից Չարենցի նամակը կնոջը. «Ամուր եղիր, հարազատս,— եթե նույնիսկ փողոց գցեն: Չէ որ միայն մենք չենք տառապում, այլ շատ շատերը, նույնպիսի մարդիկ, ինչպես մենք ենք: Միայն աշխատիր պահպանել քեզ ու երեխաներին,— ես քեզանից պահանջում եմ միայն դա: Թող աստված ձեզ պահապան լինի,— չէ՞ որ մենք, հարազատս, ոչ ոք չունենք: Համբուրում եմ ձեզ շատ, բյուր միլիոն անգամ եւ ավելի»*[26]:

Հոկտեմբեր — *Չարենցը բանտից հեռագրում է Ստալինին՝ խնդրելով պաշտպանություն եւ հովանավորություն ամեն տեսակի զրպարտություններից եւ հալածանքներից, նաեւ որպեսզի... գործը տրվի քննության: Բանտակից Վաչե Աբգարյան. «Ստալինին դիմում է գրել, որ բանտում էլ պատռել են, տեղ չի հասել»*[27]:

17 նոյեմբեր — *Բանտի բժիշկ Օկոեւի ստորագրությամբ առողջական վիճակի մասին տեղեկանք. «Ձերբակալված Չարենցը տառապում է բարակ աղիների սուր բորբոքումով: Հիվանդը գտնվում է բանտի հիվանդանոցում:*

Նոյեմբերի 16-ին քննել եմ նրան եւ պարզել հետեւյալը:

Ձարկերակը րոպեի ընթացքում բաբախում է 120 անգամ՝ թույլ լիցքով, ջերմաստիճանը՝ բնականոն: Ելքն օրվա ընթացքում երեք-չորս անգամ, հեղուկ, լորձունքոտ: Նշանակված է դեղորայքային բուժում: Հիվանդ բանտարկյալ Չարենցը պահանջ ունի դիետիկ սնունդի, իսկ դա սպիտակ հացն է կամ բուլկին, մածուն, կիսել, շաքար, կոնյակ՝ թեյի գդալով մի բաժակ թեյի մեջ: Առաջիկայում անհրաժեշտ է դիետան փոխել»[28]:

---

[26] *Ե. Չարենց, Երկերի ժողովածու, հ. VI, էջ 458:*
[27] *Ե. Չարենց, Նորահայտ էջեր, էջ 566:*
[28] *Նույն տեղում, էջ 605–606:*

20 նոյեմբեր — *Չարենցի ընտանիքին վտարում են տնից եւ մեկսենյականոց բնակարան հատկացնում նույն փողոցի վրա գտնվող «Ինտերնացիոնալ» կոչված շենքում (օպերայի դիմաց)։ Չարենցի բնակարանի իրերը էմինն ու Վիգեն Խեչումյանը տեղափոխում են Աննա Կոդաբաշյանի տուն։ Եղել են նաեւ «թղթեր, ձեռագրեր, լուսանկարներ, մանր-մունր իրեր», պահարանի տակ թաքցված թղթապանակ։ Էմինն ու Խեչումյանը Իզաբելայի խորթ հորը՝ Ավետիս Կոդաբաշյանին, ասում են. «Էս թղթերն էլ մեզ տուր»։ Մերժում է, թույլ է տալիս տանել, կարդալ, վերադարձնել։ «Տարանք հափշտակությամբ կարդացինք, արտագրեցինք եւ մեծ մասը ետ բերինք (այսինքն՝ մի մասը հետ չեն բերել.— Դ. Գ.)։ Հետո իմացանք, որ գրականության թանգարանի անունից եկել տարել են»*[29]։

Կյանքի վերջին օրերը — *«Չարենցին նստեցրել էին կամերայում միայնակ։ Մի անգամ, երբ անցնում էի նրա կամերայի մոտով, նա, լսելով ոտնաձայնս, բղավեց.*

— Ո՞վ է անցնողը, խնդրում եմ մոտենալ դռանը։

Մոտեցա դռանը, ականջս դեմ արեցի դռան անցքին։

— Թուղթ ու մատիտ տվեք ինձ,— ասաց նա։

Ես իսկույն կատարեցի նրա պահանջը։ Դռան անցքից տվեցի տետրակի երկու թերթ ու մի փոքր մատիտ։ Թուղթը վերցնելով՝ շնորհակալություն հայտնեց եւ խնդրեց վաղը նույն ժամին մոտենալ դռանը՝ գրածը վերցնելու համար։ Կատարելով նրա պահանջը՝ մյուս օրը նույն անցքից վերցրեցի գրածը ու անմիջապես հանձնեցի քաղղեկին (ինձ չէր թույլատրվում գրածները կարդալ)։

— Ինչ է գրել Չարենցը,— հարցրի քաղղեկին։

— Ձեր գործը չէ,— պատասխանեց նա ու պատռեց գրածը։

Մի քանի օր անց, քաղղեկի տրամադրության լավ ժամանակ նորից ուզեցի իմանալ, թե ինչ էր գրել Չարենցը։

— Դիմում, Ստալինին հասցեագրած դիմում,— պատասխանեց նա։

Եւ այդ դիմումը պատռվեց, բանտից դուրս չեկավ։ Այդ բանը խիստ վրդովմունք առաջ բերեց իմ մեջ։ Ասենք, բանտից էլ դուրս գար դիմումը եւ թեկուզ հասցեատիրոջն էլ հասներ, դարձյալ օգուտ չուներ, արդյունք չէր ստացվի։

---

[29] *«Չարենցի հետ։ Հուշեր», 2008, էջ 191։*

Բանտում սրսկվելու համար նա դրսից դեղամիջոց էր ստանում։ Երբ կալանավորեցին կնոջը՝ Իզաբելային, կարծեմ՝ այդպես էր նրա անունը, այլեւս դեղամիջոց բերող չկար։ Երբ սկսվում էին ցավերը, նա բարձր ձայնով բղավում էր. «Օգնեցե՛ք, մեռնո՛ւմ եմ...»։

Զարենցին զբոսանքի էին բերում միայնակ, այն էլ՝ գիշերը, երբ քնում էին բոլոր կալանավորները։ Նա գտնվում էր ճաշարանի դիմացի կամերայի երկրորդ հարկում։ Բարձրանում էր պատուհան, թեւանցուկ անում լուսամուտի երկաթյա ճաղերին, մի կերպ կպչում ճաղերից, նայում դուրս, խոսում ճաշարանի ու բաղնիսի կալանավոր-աշխատողների հետ։ Ավելին՝ ճաշարանի վարիչի հետ (Լենինականի գարեջրի գործարանի նախկին տնօրեն.— Դ. Գ.)։ <...>։ Ճաշարանի խոհանոցի պատին մեխով փորագրված էին Զարենցի «Չի շղթայվի մարդու հոգին ոչ մի կապով արտաքին, եթե Դարի, ժամանակի զրահ ունի իր հագին» տողերը։

Մի անգամ Զարենցը բռնել էր պատուհանի ճաղերը ու պպզել, պատի տակով անցնելիս նա ինձ ասաց.

— Գիտե՞ս, տղա՛ս, բանտը դարձել է պալատ, «Բանտ-պալատ», իմ նոր պոեմը կկարդաք ազատվելուց հետո, ես անմեղ եմ, կազատվեմ, հանցագործները մնացել են դրսում, բանտը լցվել է բոլշեւիկներով... Զարմանալի չէ՞։

<...>։ Մի անգամ էլ թուղթ բաժանելու համար գնացի բանտի հիվանդանոց։ Սենյակներից մեկի դուռը բաց էր, մոտեցա, այնտեղ պառկած էր միայն Զարենցը։ Ուզեցի ներս մտնել, ինձ թույլ չտվեց բժշկուհի Տերտերյանը։ Զարենցը գլուխը բարձրացնելով բղավեց.

— Օգնեցե՛ք, մեռնո՛ւմ է հայոց բանաստեղծը։

Մյուս օրը լսեցինք, որ այլեւս չկա Զարենցը, նա մահացել էր...»[30]։

«Բանաստեղծը տարվեց բանտ եւ բանտի հիվանդանոց։ Նույն հիվանդանոցում է եղել նաեւ բժշկապետ Միրզա Ավակովը (նա, ով մերժել էր Բերիային, չէր ստորագրել Խանջյանի «ինքնասպանության» ակտը եւ ձերբակալվել էր.— Դ. Գ.)։ Նույն հիվանդասենյակում եղել է նաեւ բաքվեցի մի հին հայ բոլշեւիկ, որ ազատվելուց հետո հուշեր է գրել Եղիշե Զարենցի եւ նրա մահվան մասին՝ 25 մեքենագրական էջ եւ մի օրինակ ուղարկել է տողերիս գրողին։ <...>։ Ահա թե ինչ է պատմում այդ հին բոլշեւիկը.

— Եղիշե Զարենցին բերին մեր հիվանդասենյակ։ Անընդհատ բացա-

---

[30] *«Զարենցի հետ։ Հուշեր», 1997, էջ 264։*

կանչում էր, «Ո՞ւր ես, Վլադիմիր Իլյիչ, ո՞ւր ես, ո՞ւր ես, ո՞ւր ես։ Իմանայիր, թե ինչեր են կատարվում»։

Բավական ժամանակ Չարենցը մնաց մեր հիվանդասենյակում։ Խնդրում էր մորֆի սրսկեն, որ քնի։ Չէր քնում։ Տառապում էր անքնությամբ։ Չէր մոռանում Լենինին։ Մորֆի չէին սրսկում, եւ նա ուրվականի պես գիշերները շրջում էր պալատում՝ ախ ու վախ անելով ու տառապելով։ Տեսանք, որ «շատ է խոսում», արտաքնոցի կողմի փոքրիկ խցիկը, ուր արտաքնոցի ավելներն ու մյուս գործիքներն էին պահում, մաքրեցին եւ Չարենցին տարան այնտեղ։ Այդպես անցավ մոտ մեկ շաբաթ, թեեւ Եղիշե Չարենցը լուսնոտի պես էլի գիշերները չէր քնում եւ շրջում էր սենյակում։ Այդպես բավականին ժամանակ անցավ։ Բանաստեղծի վիճակը գնալով վատացավ։ Նա անկողին ընկավ։ <...>։ Ավելի հաճախ բանաստեղծին այցելում էր բժշկապետ Միրզա Ավակովը։ Մի օր էլ ուշ երեկոյան, արցունքն աչքերին, մեզ մոտ վազեց [սպասարկողը]։ <...>։

— Դոկտո՛ր, Չարենցը ուշագնաց է, շուտ եկեք մոտը,— ասաց նա։

[Գնում, վերադառնում է երկու ժամից եւ ասում՝ Չարենցը մահացավ։ Սպասարկողն սպասել է] մինչեւ որ բանաստեղծի դիակը դուրս տանեն, որպեսզի տեսնի՝ թաղում են բանտի բակո՞ւմ, թե դուրս են տանում։ Եկավ ու պատմեց, որ Եղիշե Չարենցին եւ մի քանիսի դիակները հացի ավտոմեքենայով դուրս տարան։ Պարզ է, որ թաղել են մի եղբայրական գերեզմանոցում։ Ասում են, որ այդ ժամանակի մի բանտային ծառայող ասել է, թե՝ Եղիշե Չարենցին ու նրա բախտակիցներին տարել թաղել են Նորքի զանգվածի այդ ժամանակվա անապատային մասում՝ եղբայրական գերեզմանոցում»[31]։

Այլ տարբերակներում հացի մեքենային փոխարինում է հացի ֆուրգոնը, իսկ մահից առաջ Լենինին հիշելու մասին կա նաեւ այլ վկայություն[32]։

23 նոյեմբեր — *Ցերեկվա ժամը երեքին՝ երեխաներին կերակրելու ժամանակ, ՆԳԺԿ-ի աշխատակիցները ձերբակալում են Իզաբելային։*

27 նոյեմբեր — «Տեղեկանք

Սույն թվի 27/XI-ի ցերեկվա ժամը 7-ին բանտի հիվանդանոցում մահացավ Եղիշե Չարենցը։ 27.XI — 37 թ.։ Ստորագրություն»։

---

[31] Հ. Մկրտչյան, *Ակսել Բակունց, Եղիշե Չարենց եւ ուրիշներ, «Գրական թերթ», 1989, թիվ 12, 17 մարտ։*

[32] *Տե՛ս «Գրական թերթ», 1988, թիվ 7, 12 փետրվար։*

Հոգեկան ու ֆիզիկական ահավոր կտտանքներից հետո Չարենցի հոգին լքեց մարմինը։ Նրան ուղեկցել են ծանր հիվանդությունները, դեղորայքի բացակայությունը եւ օրեր շարունակ տեւած անգիտակից վիճակը։

28 նոյեմբեր — *Բանտում կատարում են դիակի զննում եւ հերձում, կազմվում է «Մահացածի բժշկական ակտը». «Մահացածը տառապում էր զարգացման բարձր աստիճանի հասած մորֆինիզմով եւ աղիքների սուր բորբոքումով»։ Զննությունը պարզեց. «Տղամարդու դիակ՝ միջինից ցածր հասակով, խիստ նիհարած։ Երեւացող լորձաթաղանթը եւ մաշկի ծածկույթը գունատված են։ <...>։ Ձախ նախաբազուկի արտաքին մակերեսի վրա կա հետեւյալ գրությամբ դաջվածք. «1927 թ., հունվար ամիս, Ա. Զ.»։ Երկու ազդրերի մաշկը ծածկված է ենթամաշկային ներարկումների բազմաթիվ հետքերով։ <...>։ Սիրտը բռունցքի մեծության է։ <...>։ Թոքերը դժվար են շարժվում։ Աջ թոքը խիստ սերտաճած է կրծքավանդակին։ Ձախը ազատ է։ <...>։ Գանգի հերձում չի կատարվել»։*

Ախտաբանական քննություն կատարել են դատաբժշկական փորձագետ դոկտոր Կրիժիվինսկին, դոկտոր Ա. Հովսեփյանը, բանտի պետ Միքայելյանը, բանտապետի տեղակալ Սինանյանը, ՆԳԺԿ-ի բուժմասի պետ դոկտոր Մելիք-Փաշաեւը, ներկա են եղել բանտի բժիշկներ Տերտերյանն ու Շահինջանյանը։ Հաջորդում է «Եզրակացություն»-ը, որն ստորագրել են Կրիժիվինսկին եւ Հովսեփյանը։

Ըստ «Եզրակացության»՝ դիակի հերձման տվյալները պարզել են, «որ նա տառապում էր հին խրոնիկական պլեւրիտով, լյարդի էխինակոկով, ձախ երիկամային շրջանի թարախային բորբոքումով եւ մորֆինիզմի հետեւանքով առաջացած օրգանիզմի ընդհանուր թուլությամբ, ինչպես նաեւ էնտերոկոլիտի ձեւով փորոտիքի խրոնիկական բորբոքումով, որոնք բոլորը միասին հասցրել էին օրգանիզմի ընդհանուր հյուծման, դրան ավելացրած նաեւ թոքերի կատառային բորբոքումը, ինչը եւ դարձել է մահվան մերձակա պատճառ»[33]։

Սա բժշկական՝ պաշտոնական ձեւակերպումն է, իսկ ճշմարիտ ձեւակերպումն այն է, որ Չարենցին մահվան հասցրեց ստալինյան մարդակործան վարչակարգը։

[33] *Ե. Չարենց, Նորահայտ էջեր, էջ 606–608։*

Չարենցի գերեզմանը — *Ըստ որոշ վկայությունների՝ Չարենցին թաղել են գաղտնի, գիշերը, երեւանամերձ մի վայրում, որ այն ժամանակ էլ հայտնի էր որպես ՆԳԺԿ-ի պանսիոն, տեղանքը հայտնի է, ուր դեռեւս 1988-ից կատարել ենք որոնումներ, բայց ապացույցները բացակայում են: Որոնումներն ընդհատվեցին, որովհետեւ Չարենցի ընտանիքը՝ Արփիկ Չարենցի գլխավորությամբ, հայտարարեց, որ իրենք դեմ են Չարենցի գերեզմանը որոնելուն:*

Այդ վայրում Չարենցի թաղված լինելու եւ հետագա բացահայտումների մասին 1988-ին պատմել է Չարենցի դին ՆԳԺԿ-ի պանսիոնատի տարածքում (ներկայիս չինական դեսպանատան եւ ոստիկանական ակադեմիայի միջեւ) հողին հանձնող հրազդանցի Լյուդվիգ Թորոսյանը, *որն այդ տարիներին եղել է կալանավոր. «Ես դատապարտյալ էի եւ բանտի անասուններն էի պահում: [Կարգադրում են բահ ու քլունգ վերցնել ու հետեւել իրենց]: Բեռնատարով հասանք Հրազդանի կիրճի ձորաբերանը, որտեղ վերջանում էր այգին: Մեքենան կանգնեց քարակույտերից մեկի մոտ, ինչը գոյացել էր այգին քարերից մաքրելուց: [Ինձ կարգադրում են] ....քարերը մի կողմ տեղափոխել եւ հողը փորել, որպեսզի մեզ հետ բերած պարկը թաղեմ: Ճանապարհին արդեն գլխի էի ընկել, որ պարկի մեջ դի է: Մինչեւ գոտկատեղս միայնակ փորեցի, բայց երբ հասա ժայռի, դադարեցրի: <...> Թափքից իջեցրին պարկը եւ տվեցին ինձ: Երբ ձեռքս տարա, հասկացա՝ նրա մեջ փոքրամարմին մարդու դիակ է: Այն նետեցինք փոսը: Դարձյալ միայնակ՝ սկզբում հողով, այնուհետեւ քարերով ծածկեցի պարկը՝ տեղանքը բերելով նախկին տեսքի: Երբ ամեն ինչ տեղը տեղին արեցի, վերջացրի [, ղեկավարը] մոտեցավ ինձ, հանեց ատրճանակը, դրեց ճակատիս եւ ասաց. <...> իմացա՞ր, ո՞ւմ թաղեցիր: <...>: Նա թե՝ պարկի մեջ Չարենցն էր, բերանդ փակ կպահես: Եթե բացես, գյուլլեն ճակատիդ կուտես ու կողքին կպառկես: Ես էլ բերանս փակ պահեցի»[34]: Այստեղ թաղված լինելու վարկածը հաստատում է նաեւ Եղիշե Հովհաննիսյանը: Այդ մասին նա ասաց մեր հանդիպման ժամանակ, երբ Չարենցի ժառանգության հետքերով տպագրության էի նախապատրաստում Չարենցի մասին հուշերի երրորդ գիրքը, ինչի կապակցությամբ առիթ ունեցանք հանգամանորեն զրուցելու[35]: Այլ վկայություն.*

[34] *«Հայոց լեզու եւ գրականություն», «Չարենցի գերեզմանը», 2015, թիվ 2, էջ 48—49:*
[35] *«Չարենցի հետ: Հուշեր», 1997, էջ 389—405:*

«Կալանավոր Աշոտն ինձ ասաց, որ «Չարենցի մահացած գիշերը նրանից բացի բանտում ոչ ոք չի մեռել։ Հեռախոսի անընդհատ զանգերով հարցրել են, թե Չարենցին ուր եւ ինչպես թաղեն։ Խոսք է եղել բանտի պատի տակ թաղելու մասին, բայց ասացին, որ տարել են Թոխմախան լճից հեռու լանջում հողով «արել»»[36]։

РЕЗЮМЕ

В статье в хронологическом порядке представлен последний год жизни армянского гения – Чаренц, находящегося в капкане репрессий, ведущих к гибели. Гонения на Чаренца усилились в 1933 году в связи с запретом издания «Книги пути», которая в итоге с изменениями вышла в свет в 1934 году. В 1935 году он неоднократно подвергался допросам, а в день своего рождения, 13 марта, был исключен из Союза писателей.

В 1937 году преследования усилились. Чаренца обвинили в национализм и арестовывали 27 июля 1937 года. Допросов не было. Поэт умер в нечеловеческих условиях тюрьмы 27 ноября 1937 года.

За это время он написал много стихов. Представлена литературная среда, в которой жил и творил Чаренц. Это была обстановка политического мошенничества, обусловленная деятельностью Сталина-Берии, планом последующего приговора политического руководства Армении (Ханджяна, Аматуни) к смертной казни. За это время литературные силы были уничтожены, а расстрелы и депортации стали обычным явлением. Чаренц умер в тюрьме. Местонахождение его могилы до сих пор неизвестно.

SUMMARY

The article chronologically presents the last year of the life of Charents, unfortunate Armenian genius. He is portrayed in the trap of repressions that lead to death. Persecutions against Charents had been intensified as early as in 1933 in connection with the ban on the publication of the book “Book of the Road”. Finally, the book

[36] *Նույն տեղում, էջ 117։*

was published with changes in 1934. In 1935, he was repeatedly interrogated, and on his birthday, March 13, he was expelled from the Writers' Union. In 1937, the persecutions were intensified even more. Charents was accused of being a nationalist, and was arrested on July 27, 1937 without any interrogation. He died in inhuman conditions of prison on November 27, 1937. During this period, he wrote many poems.

The article presents the literary environment, in which Charents lived and created. It was an environment of political fraud, conditioned by the activities of Stalin and Beria, with a plan to subsequently sentence the Armenian political leadership (Khanjyan, Amatuni) to death. During that period, literary figures were massacred; executions and deportations became ordinary. Charents died in the prison of Yerevan; his burial place is unknown.